

2014թ. Խոշոր հարկ վճարողների ՀՏ մոնիտորինգի ամփոփ ցուցանիշների
վերլուծություն

Սույն վերլուծությունը իրականացվում է այն 517 հարկ վճարողների ամփոփ ցուցանիշների հիման վրա, որոնք ՀՀ ֆինանսների նախարարի հրամանով ընդգրկված են Խոշոր հարկ վճարողների հարկային տեսչության կողմից 2014թ.-ի ընթացքում սպասարկվող հարկ վճարողների ցանկում:

Խոշոր հարկ վճարողների մոնիտորինգի ամփոփ ցուցանիշների համեմատական վերլուծությունը իրականացվում է նույն 517 հարկ վճարողների 2013 և 2014 թվականների փաստացի տվյալների հիման վրա:

2014թ. չորրորդ եռամսյակի ամփոփ ցուցանիշների վերլուծության հիման վրա կարելի է փաստել, որ

1. Իրացումից հասույթը կազմել է 1027.4 մլրդ դրամ կամ նախորդ տարվա նույն եռամսյակի համեմատությամբ աճել է 10,9 %-ով:
2. Ներմուծման ծավալները կազմել 313.8 մլրդ դրամ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի 341.8 մլրդ դրամի փոխարեն:
3. Արտահանման ծավալները աճել են մոտ 20%-ով և կազմել 142.9 մլրդ դրամ
4. Վճարված մաքսային վճարների ցուցանիշի առումով 2014թ.-ի չորրորդ եռամսյակում խոշոր հարկ վճարողների կողմից վճարվել է շուրջ 62.4 մլրդ. դրամ:
5. Պետական բյուջե վճարված հարկերի և այլ պարտադիր վճարների ցուցանիշի առումով 2014թ.-ի չորրորդ եռամսյակում խոշոր հարկ վճարողների կողմից վճարվել է շուրջ 89.5 մլրդ. դրամ: Ընդ որում, նշված կազմակերպությունների կողմից 2014թ.-ի չորրորդ եռամսյակում վճարվել է հանրապետությունում հավաքագրված հարկային եկամուտների մոտ 46%-ը:
6. Հարկային մարմնի կողմից կատարվել են 198 հարկային ստուգումներ, այդ թվում բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության 69 ստուգումներ, որոնց արդյունքում առաջադրվել է բյուջե լրացուցիչ վճարման ենթակա գումարներ 13 մլրդ. դրամի չափով:
7. 01.01.2015թ.-ի դրությամբ խոշոր հարկ վճարողներն ունեցել են 137.7 մլրդ դրամ գերավճար, այդ թվում՝ ավելացված արժեքի հարկի գծով՝ 87.7 մլրդ դրամ, իսկ հարկային պարտավորություն՝ 28.7մլրդ. դրամ: Նշված ժամանակահատվածում պետական բյուջեից հարկ վճարողների

գերավճարների գումարներից ավելացված արժեքի հարկի վերադարձի ձևակերպում է կատարվել 8.2 մլրդ դրամի չափով, իսկ գերավճարների գումարներից այլ հարկատեսակների գծով հաշվանցվել է 10.7 մլրդ դրամի չափով:

8. Աշխատողների միջին ցուցակային թիվը դիտարկվող ժամանակահատվածում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ ավելացել է 1867 մարդով կամ 1.2%-ով, իսկ աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցների աճը կազմել է 6.3%: